Ուսուցման ծրագիր

Դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինների համալրման նպատակով որակավորման ստուգմանը, դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթներին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց նախապատրաստական դասընթացների:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինների համալրման նպատակով որակավորման ստուգմանը, դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, դասավանդվող առարկա-յական կուրսերի արժեքները:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ մասի, 19-րդ հոդվածի, Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի 22.12.2021 թվականի թիվ ԿԽ-010/21/3 որոշմամբ հաստատված ««Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման» կարգի, ինչպես նաև Ունկնդիրների համապատասխան մասնագիտական կարիքների բավարարման հաշվառմամբ:
3. Ծրագրի նպատակն է Ունկնդիրների շրջանում՝ արդարադատության իրականացմանը նպաստող մասնագիտական հմտությունների ձևավորումը, ինչպես նաև Ունկնդիրների գիտելիքների և աշխատանքային ունակությունների զարգացումը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով (հեռավար միանալու հնարավորությամբ)՝ լսարանային ուսուցման եղանակով՝ առավելագույնը 10 Ունկնդրից բաղկացած խմբերով:
5. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 2024 թվականի հունվարի 22-ից 2024 թվականի ապրիլի 19-ը ներառյալ:

II.ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

№	Անվանում	Արժեք
1.	ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրություն քաղաքացիական գործերով	450.000 ՀՀ դրամ
2.	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրություն քաղաքացիական գործերով	450.000 ՀՀ դրամ
3.	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրություն քրեական գործերով	450.000 ՀՀ դրամ
4.	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրություն քրեական գործերով	450.000 ՀՀ դրամ
5.	ՀՀ վարչական իրավունքի արդի հարցեր, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրություն վարչական գործերով	450.000 ՀՀ դրամ
6.	ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրություն վարչական գործերով	450.000 ՀՀ դրամ